դոյ ոչ քրիստոնէի և ոչ հեթանոսի գերի, և ամենայն ժամ եթէ 'ի ժամանակս պատերազմի և եթէ խաղաղութեան ամենայն էգ 'ի ընութենէ մարդոյ ազատ լիցի բայց 'ի մեղաց գործոց ձեռաց իւրոց։

ԳԼՈՒԽ ՅԻԵ.

'Ի ժամանակի պատերազմի որ ոք յազգէ որ իցէ, և կամ 'ի յազգէ թշնամեաց, եթէ 'ի յազգէ յայնմանէ որում հռչակի պատերազմն եթէ գոցի ոք վաճառականք ընչիւք իւրօք 'ի ժամանակի խաղաղութեան մտեալ 'ի յաշխարհս մեր և կամ պանդուխտ ընակեալ 'ի յաշխարհն մեր և կամ դրամն իւր փոխ տուեալ յազգին մերոյ, կալով մնասցէ ազատ ընչիւք իւրօք, եթէ կամեսցի ելանել առ աշխարհն և ազգն իւր իւրեանք միայն գոցեն թուղթ ազատապէս ելանելոյ 'ի թուէն հռչակմանէ պատերազմի մինչև քառասուն և հինգ աւուր միջոց ժամանակաւ ելանելոյ, ելցեն և պահպանութեամբ մերով մինչև մտցեն առ յազգս իւրեանց, և զամենայն զոր ինչ ստացուածք նոցայ մնասցէ 'ի աշխարհ մեր 'ի ձեռին փոխանորդին իւրեանց մինչև 'ի ժամանակն խաղաղութեան, և ապա հանեսցեն յաշխարհէ մերմէ, և յետ քառասուն հինգ աւուր ժամանակի հռչակմանէ պատերազմին ոչ ոք կարէ ելանել, եթէ ոչ պարտ է նոցա կալ և մնալ ընակեալ 'ի յե-